Նոյն գիւղացի Յարութիւն Մուրատեան	.	20
„ Սիմէօն Ջալալշօյեան .	.	20
„ Ադամ Եափկեարեան .	.	20
„ Խաչատուր Խարպէյեան .	.	10
„ Ստեփան Մանուկեան .	.	10
„ Գէորգ Մելքեան .	.	10
„ Սահակ Մատթէոսեան .	.	10
„ Մովսէս Մատթէոսեան .	.	25
„ Կարապետ Տէր Խաչատրեան	,	10
„ Յովհաննէս Քհ. Տ. Առաքելեանց		50

(Շարունակելի):

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԻՍԱՀԱԿ ՄՈՎՍԷՍԵԱՆ ԳԱՍՊԱՐԵԱՆՑ, ՊԱՏՃԷՆ ԿՏԱԿԻ ՆՈՐԻՆ, ԵՒ ՏԱՊԱՆԱԳԻՐՔ։

Բարեյիշատակ այրն Իսահակ Մովսէս Գասպարեանց քաջ իմանալով աղցաւոր կենցաղոյս ստուերի նման սահուն և փութանցիկ շրջանը և ոչինչութիւնը, գիտացած է ի կենդանութեանն մասն բարի ընտրել և այնպիսի առաքինական սխրալի մեծագործութիւն թողուլ, որով յետ փոխելոյ յաշխարհէս՝ անուն բարի ժառանգեց, և իւր առաքինութիւնքն վկայեցին և կըվկայեն Քրիստոսի սիրելի և հաւատարիմ ծառայ և Աւետարանի արժանի աշակերտ հանդիսանալն, ինչպէս նաև ոչ սակաւ մերազնեայ որբոց և տնանկաց խնամածու հայր, և ուսումնակարօտ Հայ մանկտւոյն պաշտպան և բարերար կանգնիլն ։

Սորա հրատարակեալ հոգևոր կտակէն կիմացուին վերոյիշեալ անմահանուն առաքինւոյն սխրագործութիւնք, և բազմաց ի մերազնէից քաջայայտ և ականատես են նորին ի Մոսկով կանգնած Աղքատանոցն կամ Որբանոցն և ի նմին պատսպարեալ անտէր և անօգնական Հայկազն թշուառ տնանկաց վայելած խնամքն, ինչպէս նաև նորին կտակած առանձին գումարաց արդեամբք կրթեալ և ուսեալ մանկունքն, և բազմիցս հեռաւոր վայրերէն ի Մոսկով պանդխտացած խեղճ Հայորեարն անգամ օգնութիւն և նպաստ գտեալ են և կգտնեն նորա բարերարութիւններէն ի ձեռն կտակակատարացն, յորոց ոմանք արհեստներ ևս կուսանին նորին ծախիւք ։

Արդ այնպիսի մի բարեյիշատակ անձ որքան սիրելի է Քրիստոսին, նոյնքան ևս մարդկան բաղձալի և նախանձելի լինելով, խնդրուեցաւ նորին կենսագրութիւնը հանդերձ կտակովն հրատարակել, սակայն առ այժմ բաւականանալով յիշեալ Բարերարին կանգնած Գասպարեան որբանոցէն կտակակատար Խորհրդարանի գրած հետևեալ համառօտագոյն տեղեկութիւնը հանդերձ կտակովն ի լոյս տալ, կյաւելումք նաև նորին գերեզմանին արձանագիրը ընդ Ռուսերէնին, և մինչանւոր ազգայնոյ՝ Գեներալ-մայօր Պօղոսի Մէլիքեանցի տապանագիրն ևս հրատարակել ։

Սակաւ միջոցէն պիտի հրատարակեմք Գասպարեան Որբանոցի Խորհրդարանի տարեկան հաշիւն՝ զոր ամեն տարի կըմատուցանեն Վ.եհ. Հայրապետի ամենայն Հայոց, յորմէ պիտի տեսնուի ոչ միայն տարեկան թէ՛ նոյն Ապաստանարանի և թէ՛ այլ բարեգործութեանց վերայ եղած ծախքն, այլ և գումարին որքան յաւելացած լինելն, որոյ համար առանձին շնորհակալութեան արժանի է Վ.սեմ. Յովհաննէս Ս. Յովհաննեանց բարեպաշտ և ազգասէր անձն ։

Այժմ Խորհրդարանը կբաղկանայ հետևեալ անձինքներէ, որք են՝

Նախագահ Ընդամ Վ.սեմ. Յովհաննէս Յովհաննեանց

Ընդամք Մեծ. Միքայէլ Ստեփանեանց
,, Մելքոն Գասպարեան Փանեանց
,, Գէորգ Մարտիրոսեան Լիանոզեանց
,, Բարեկր. Յարութիւն Եւադ քհնյ. Կէօքչէեանց։

Ընհաւասիկ Խորհրդարանի գրածն։

,, Իսահակ Մովսիսեան Գասպարեանց ծնաւ ի Նահանգս Շուշոյ քաղաքի ի գեօղն Խնձորստան Գանձասար անուանեալ տեղւոջ յամին 1781 յ3 Մայիսի։ Անգստին ի մանկական տիոց մասնաւոր եղանակաւ վարժեցաւ Հայկական ընթերցանութեամբ և վայելչագրութեամբ ի ձեռն մասնաւոր ուսուցչի. հուսկ յետոյ ինքնուս աշխատասիրութեամբ պարապեալ ընթերցանութեան և գրաւորականաւ Ռուս լեզուի յաջողեցաւ նմա սովիմբ յառաջանալ ի վաճառականութեան։ Այրս այս բարեպաշտ ածեալ հասակաւ առ ծրնողն ցհասանիլ յաւարտահասակ երիտասարդութեան իւրոյ այն է՝ իբրու 23 ամաց՝ զերեսս իւր դարձուցեալ ի Ռուսաստան հաստատեաց ի մտի իւրում առնել զտեղի բնակութեան ի Մոսկուա մայրաքաղաքիս, ուրանօր վերջապէս դիմեալ եհաս յաղնուական կէտ նպատակի իւրում այն է՝ ի Մոսկուա, և մտեալ ի ծառայութիւն առ աղնուական Աւետիս Գալստեան Գալուստովն ծառայեաց նմա ամենայն հաւատարմութեամբ պարապելով երբեմն երբեմն և զանազան առևտրական գործովք, քաղելով զբազմատիրձ տեղեկութիւնս վաճառականութեան, որով և ջանացաւ հաւատարիմ լինել ի կատարել առևտրական գործունէութիւնս իւր, յորում յառաջադէմ գտաւ առ ի վաստակս մինչև այնչափ՝ զի յայտնի կացոյց զանձն իւր առ վաճառական անձինս Ռուսաց, յորոց և շահեցաւ մեծագոյն դրամական հարստութիւնս իւր առ ի վարձ հաւատարիմ և ժրաջան ծառայութեանց։ Զկնի ժամանակաց խորհրդով և միջնորդութեամբ յարգելի ազգասիրաց և յոգնաջան յորդորանօք նախ՝ Աղայ Յովհաննիսի Ստեփաննոսեան Յովնանեանց, ապա՝ Աղայ Ագաթոնի Դաւթեան Ակիմեանց և յոգնաթախանձ ջանասիրութեամբ ի Տէր հանգուցեալ բարեպաշտ առն Գեներալ մայոր Պօղոսի Մովսիսեան Մելիքեանց, որք արժանաւոր գովեստիւք աշխատասիրեալ ջան ի գործ եղին տալ նուիրել զայն մեծաքանակ գումար յօգուտ ազգին իւրոյ, աւանդեալ կտակաւ զմնացեալ գումար իւր, ի շնորհս ազգի իւրոյ իւրաշէն ազգատանոցի, որ կառոյց ի կենդանութեան իւրում աստ ի Մոսկով վասն ազգատաց ազգիս Հայոց զտուն ապաստանի ընդ տեսչութեամբ և գլխաւոր կառավարութեամբ չորից ընտրեալ բարեբար անդամոց ժողովոյ, որպէս քաջայայտ նշմարի ի կտակին հանգուցելոյ, որ Խորհրդարանս խոնարհական յարգանօք շնորհ ունի մատուցանել ընդ սմին Վեհափառ Տէրութեանդ, յորում զբտանին ամենայն տեղեկութիւնք թէ զգումարաց, զորս ունի նուիրեալ վասն զանազան առարկայից, թէ զդաստիարակութեան մանկանց և թէ այլ ամենայն բարեգործական իրաց։ Զայս ամենայն ածեալ ի կատար յանձն արար կտակակատարաց՝ այն է Նորին Գերազանցութեան Եսայեայ Գէորգեան Բաղտատեանց և Աղայ Յովհաննէս Ստեփաննոսեանի Յովնանեանց, ի կատար ածել զայն ամենայն որ ի կտակին աւանդեաց, որոց յանձնեաց նոյնպէս զմնացեալ գումարն 33,600 րուբլիս արծաթոյ, զի նոքա ըստ բարեհաճ կամաց իւրեանց տնօրինեսցեն զտոկոսիս իւրաքանչիւր ամի յամենայն բարենպատակ գործս՝ յորպիսիս օգտակար համարեսցին։ Եւ այնպէս կընքեաց զկեանս իւր բարեպաշտ այրն Իսահակ Մովսիսեան Գասպարեանց ի 1847 ամին ի 26 Փետրուարի։ ,,

(Պապէն Պապէ։)

ՅԱՆՈՒՆ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐԲՈՐԴՈՒԹԵԱՆ, ՀՕՐ ԵՒ ՈՐԴՒՈՅ, ԵՒ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ։ ԱՄԷՆ։

Ես ի Ներքոյ սորին ստորագրեալս, Մոսկուայի պատուամեծար քաղաքացի Եսայի Մովսիսեան Գասպարեան՝ լինելով յառողջ միտս և ի կատարեալ յիշողութեան բարուք վարկայ ինչ ինչ փոփոխութեամբք լրացուցանել զհոլեւոր կտակն իմ, զարարեալն ի 1844 ամին ի 28 Դեկտեմբերի՝ որ պահպանի ի Խնամակալաց Խորհրդարանին Մոսկուայի, ունելով զլիուլի իրաւունս ըստ 851 և 852 յօդուածոց Ժ հատորոյ քաղաքական օ-

րինաց (Բ. Հրատ.) Թողեալս ի կամս կառավարարին. Արդ ես վերստին արարի ի դէպս մահուան իմոյ զկարգադրութիւն վասն արդար վաստակոց ի ձեռս բերեալ շարժական և անշարժ ստացուածոց իմոց, նոյնպէս և առձեռն դրամոց և մուրհակաց Պահպանողական գանձատան. ընդ նմին ի կատարումն նշանակելոց ընտրեցի ես կտակակատարս զՆերգործական Պետական Խորհրդական զՍենեկապետ և զԱսպետ զԽաչատուրն Յովակիմեան Լազարեան, զԳեներալ Մայոր և զԱսպետ Պօղոսն Մովսիսեան Մելիքեան, զԿոլլեժսկիյ Սովէտնիկ և զԱսպետ Յոսէփ Գէորգեան Պաղտասեանց, զԱթանագինէ Դաւթեան, զՊ. Յովակիմեան և զանդամ առևտրոյ զՅովհաննէս Սոխիանեան Անանեանց, յորոց խնդրեմ ամենախոնարհաբար, զի ո՛ ոք ի նոցանէ գտանիցի ներկայ ի Մոսկուայ՝ առանց հայելոյ ի բացակայութիւն այլոց և առանց սպասելոյ մասնակցութեան նոցին՝ առցէ յանձն իւր զաշխատանս յետ մահուան իմոյ ի կատար ածել զհետևեալս։

Նախ՝ զկառուցեալ իմն ի Մոսկուայ առ Ս. Խաչ եկեղեցւոյ Հայոց ի Մեասնիցքիյ թաղին զհրապարակ տունն ամենայն պարագայիւք թողում վասն խնամարկութեան աղքատ Հայոց ի տնօրէնութիւն չորից Անդամոց ի կառավարութիւն նորին ընտրելոց, որպէս նշանակեալ է ի կանոնս աղքատանոցին. բայց այնու՝ զի խնամարկեսցին աղքատք միայն յերկոսին բարձրագոյն յարկս, իսկ ստորինն անյարմար գոլով վասն բնակութեան՝ գործածեսցի այն ըստ բարեկարգութեան առ այլ պէտս նոյն Աղքատանոցին։

Երկրորդ՝ ցանկանալով ի կենդանութեան իմում անմոռաց պահել զ23 օրն Փետրուարի 1841 տարւոյն, յորում եղաւ սկիզբն բարեգործութեան աղքատաց եկեղեցւոյն Հայոց, ես եդու մշտնջենաւորապէս ի Պահպանողական Գանձարանն զերեք հարիւր ռուբլիս արծ. այնու մտօք, զի յայնմ արժանայիշատակ աւուր կատարեսցի աստուածային Պատարագ և Հոգեհանգիստ վասն հանգուցեալ բարերարաց. Ի տոկոսեաց յիշատակեալ գումարին խնդրեմ ամ ըստ ամէ տալ յօգուտ եկեղեցւոյ երկոտասան ռուբլի Թղթադրամս, իսկ զմնացեալ երեսուն ռուբլիս սրբազնագործ պաշտօնէից. և այս ցանկութիւն իմ որ սկսեալ է կատարիլ ի 1842 ամէն՝ պարտի շարունակել միշտ նաև յետ իմոյ մահուան։

Երրորդ՝ յորժամ փոխեցայց ես յաշտեացս՝ յայնժամ տացեն ի Պահպանողական Գանձարանն ի դրամոց իմոց մշտնջենաւորապէս ռուբլիս արծաթոյ հինգ հազար, այնու՝ զի տոկոսիք այս գումարի ամ ըստ ամէ ընդունիցին և գործադրեսցին ի նորոգութիւն և ի վայելուչ պահպանութիւն իմն կառուցեալ տան, և ի հատուցումն վարձու պահապանին՝ որ կարգելոց է. Տունս այս խնամարկութեան պարտի հանապազ գտանիլ ընդ կառավարութեամբ, տնօրէնութեամբ և վերահայեցողութեամբ վասն այն ընտրեալ վերոյիշեալ յառաջնում յօդուածի անդ անդամոց։

Չորրորդ՝ ես արկի ի Պահպանողական Գանձարանն Խնամակալաց Խորհրդարանին Թղթադրամս յիսուն հազար ռուբլիս, որ առնէ արծաթ դրամ 12,285 ռուբ. 71 կոպ. մշտնջենաւոր ժամանակաւ, այնու դիտաւորութեամբ՝ զի տոկոսեօք կէս գումարին դաստիարակեսցի առ կենդանութեամբ իմով ի Լազարեան Ճեմարանին արևելեան լեզուաց որ ի Մոսկուայ աղքատ Հայ մանուկ մի (որ արդէն դաստիարակի), իսկ զմիւս կէսն դրամագլխոյն կալցի վասն սննդեան իմոյ ցորչափ ապրեսցի. իսկ զկնի մահուան իմոյ՝ տացեն ի նոյն Ճեմարան զայլ մանուկ մի ի Հայոց, այնպէս զի ի յիշատակեալ աղքատիկ պատանեկաց կարելի լինիցի միշտ յայնմ Ճեմարանի ընդունել այնպիսի կրթութիւն, որ առաւել օգտակար և համապատասխան իցէ ապագայ նշանակութեան նոցին, և ես ցանկամ զի այն աշակերտք յետ վերջանալոյ ուսման ի Ճեմարանին ուսանիցին զուսումն վաճառականութեան, ուստի և թողում կտակակատարաց իմոց ռուբլիս արծաթոյ տասն հազար *) սակս հատուցանելոյ ի դրամագլուխս Ուսումնարանին վաճառականութեան՝ որ առաջադրեալ է կառուցանել ի Տփխիս

*) Ի պատճառս չկառուցման ի Տփխիս Ուսումնարանին վաճառականութեան, յետ 10 ամաց դրամագլուխս այս յաւելաւ ի դրամագլուխն, որ նշանակեալ է ի վերջնում յօդուածի կտակին.

այնու՝ զի ի Ճեմարանէն յայսմանէ ծախուք իմովք և ծրիապար դաստիարակեալ աշակերտք յաւարտ ուսման իւրեանց տակոսեօք այնր դրամագլխոյ իմոյ յուսումնարանին Տփխիսու ուսանիցին զուսմունս վաճառականութեան։ Իսկ եթէ Ուսումնարանն այն վաճառականութեան չկառուցանիցի, և կամ զյիշեալ դրամագլուխն չընդունիցի ի վերայ այնպիսի հիման, և կամ եթէ կտակակատարք անյարմար և անօգուտ համարիցին զշարունակումն ուսման վասն սանից իմոց, յայն դէպս տամ նոցա իրաւունս գործադրել զտակոսիս այնր դրամագլխոյ ի կատարելագործութիւն առևտրական գիտութեանց այնու հնարիւք և միջոցօք, զորս նոքա յայնմ ժամանակի ըստ ընդունակութեան դաստիարակելոց ի հաշիւ իմ և վասն նոցա հաստատագոյն և օգտակարագոյն համարիցին. Իսկ յետ ելից նոցին ի Ճեմարանէն և յաւարտ առևտրական գիտութեանց ի տեղի նոցա ընդունել զայլ երկուս աշակերտս և ըստ օրինակի առաջնոյն դաստիարակել։ Եթէ գտանիցին ցանկացողք յազգականաց իմոց վասն մտանելոյ ի Ճեմարանն և ուսանելոյ զուսումն վաճառականութեան, խնդրեմ ընտրել ի նոցանէ զմերձաւորագոյն ինձ ազգականս։

ՀԻՆԳԵՐՈՐԴ՝ քսան և հինգ հազար ռուբլի թղթադրամ կամ*) 7,192 ռբլ. 85 կոպ. արծաթադրամ նոյնպէս դնել ի Պահպանողական Գանձարանն խնամարկութեան ի Խորհրդարանին Մոսկուայ վասն շահեցողութեան ցայն ժամանակ՝ յորում Պ. կտակակատարք կարող լինիցին ձեռն արկանել ի շինութիւն քարեայ պարսպի շուրջ զգերեզմանատամբ Հայոց, որ գտանի անդր քան զկայարանն Փրէսնեան, մերձ Ռուսաց Վաղանկովսկեայն, յայնժամ զդրամագլուխս զայս հանգերձ տակոսեօք ընդունել և ի գործ ածել ի կառուցումն յիշեալ պարսպի քառեակ աշտարակօք յանկիւնս նորին. բայց այս առնել յայն դէպս՝ յորում հետևեսցի ի շինութիւն պարսպին բարձրագոյն հաճութիւն կամ հրաման Կառավարութեան և տեղիս այս անուանիցի Վ.անք. իսկ եթէ անբաւական համարեսցի առ այն դրամն յետ տասն ամաց յորէ մահուան իմոյ, յայնժամ առ այն առարկայ նշանակեալ գումարն փոխարկել յատկապէս ի մի դրամագլուխ վասն դաստիարակութեան ի Լազարեանց Ճեմարանին Մոսկուայ ծախուք իմովք երրորդ աշակերտի ի վերայ նոյն հիմանց՝ որք արձանագրեալ են ի չորրորդում յօդուածի այսր կտակի վասն երկուց աշակերտաց. իսկ զհաւաքեալ տակոսիս կցել յայն առանձին դրամագլուխ՝ որ նշանակեալ է ի վերջնում յօդուածի, որպէս զի կտակակատարք զայն գործադրեսցեն ըստ բարեխառնութեան իւրեանց յորպիսի և իցէ բարեգործութիւնս։

ՎԵՑԵՐՈՐԴ՝ զարծաթեայ ոսկեզօծ պատկեր Աստուածածնի երկոքին արծաթեայ կանթեղօք դնել ի կառուցեալ յինէն տան խնամարկութեան աղքատաց՝ ի զաւհլճի Խորհրդարանին։ Ոսկեայ ժամացոյցս իմով պարգևատրել զայն ի սանից իմոց՝ որ քաջալու յառաջադիմութեամբ և վարուք աւարտիցէ զուսումն գիտութեանց. ուստի և զժամացոյցն զայն պահել մինչև ցայն ժամանակ, յորում մին յաշակերտաց իմոց առաջին համարեսցի ի վարս և ի գիտութիւնս։

ԵՕԹՆԵՐՈՐԴ՝ ի վանս Գանձասարու, որ ի գաւառին Ղարապաղի՝ առաքել ծածկոց սեղանոյ, շուրջառ քահանայի և շապիկ սարկաւագի՝ 10 ռուբլեոյ կողն, նոյնպէս թագ քահանայական հարիւր ռուբլեոյ արժողութեամբ, և սկիհ մի ընդ 150 ռուբլի արծաթոյ։ Նոյնանման ծածկոց, շուրջառ և շապիկ նոյնպէս թագ և սկիհ հաստատանել յեկեղեցին որ գտանի ի Խաչենեան գաւառին ի Խնծորաստան գեղջ, յորում ես ծնայ։

ՈՒԹԵՐՈՐԴ՝ զմարմին իմ տալ հողոյ առանց աւելորդ փառաւորութեան, ըստ կարի պարզօրէն և արձան կանգնել ի վերայ գերեզմանիս զիւրագնի. բայց զայս ամենայն թողում ի կամս կտակակատարաց իմոց։ Քահանայից, որչափ և գտանիցին ի ժամ թաղման իմոյ, ամենեցուն տալ 150 ռուբ. արծ. Սարկաւագին և դպրի 50 ռուբ. բաժանել աղքատաց 10 ռ. որ գտանիցին առ այս Եկեղեցեաւ և ի գերեզմանատան յաւուր թաղման իմոյ. 15 ռ. ամենայն պահապանաց եկեղեցեաց մերոց։

*) Յիշեալ գումարն գործադրեալ է համաձայն կտակի ի շինութիւն քարեայ պարսպի շուրջ զգերեզմանատամբ Հայոց որ է Մոսկուա։

Իններորդ՝ վեց հարիւր ռուբլի դնել մշտնջենաւորապէս ի Պահպանողական Գանձարանն, և ի տարեկան տոկոսեաց սորին վեց րուբլի արկանել ի գանձանակ եկեղեցւոյ, եօթն ռուբ. բաժանել մերազնեայ աղքատաց, իսկ զմնացեալ մետասան ռուբլիս թողուլ յօգուտ սրբազնագործ պաշտօնէից այնու՝ զի նոքա ամ ըստ ամէ յօր մահուան իմոյ կատարեսցեն զպատարագ և զհոգեհանգիստ։

Տասներորդ՝ զիւղարդ ի թաղման իմում գործածել քսան կաղ՝ հնգետասան ռուբլւոյ կաղն, յորմէ տալ շինել շուրջառ քահանայական, շապիկ սարկաւագի և ծածկոց սեղանոյ։ Զսոյն շուրջառ խնդրեմ գործածել յեկեղեցւոջ ամենայն տարի ի 23 Փետրուարի և յաւուր մահուան իմոյ։

Մետասաներորդ՝ զմի մասն ընչից իմոց՝ եղելոց ի տան իմում՝ և այլ ևս վեց հարիւր ռուբլիս շնորհեմ ի պարգև աղախնոյ իմ Մոսկայի քաղաքացւոյ Վառվառէի Նիկեֆորեան Պոնպոլեան այնու՝ զի ի տոկոսեաց պահեսցէ նա զմայր իւր և զինքն մինչև ցմահ, յետ որոյ դրամագլուխն կցեսցի ի յիշատակեալ ի վերջնում՝ յօդուածի բարեգործական իրս։

Պարտաւորեմ զկտակակատարս ի կարգ դնել զյիշեալ ամենայն անեղէն իրս և տալ պարգև Վառվառեայ ըստ նկատողութեան իւրեանց. բայց յայնմանէ տալ նմա առձեռն 50 ռուբլիս. իսկ միւս աղախնոյ իմում տալ նոյնպէս առձեռն ցօր մահուան իմոյ ռուբլիս արծ. տասն։

Երկոտասաներորդ՝ զամենայն պարտատումարս, որ մնասցեն յետ մահուան իմոյ առ զանազան անձինս, և զանազան պարտամուրհակս և զդրամական գումարս խնդրեմ խոնարհաբար ի Պ. կտակակատարաց իմոց ընդունել, նոյնպէս նաև զայն ամենայն առհասարակ՝ որ մնասցէ յետ առնելոյ իմն զկարգադրութիւնս, և կազմել ի սոյն գումարոց զառանձին բարեգործական դրամագլուխ դնել ի Խորհրդարանն խնամակալութեան և թողուլ զայն անմասնելի, իսկ զտոկոսիս այսր դրամագլխոյ՝ որ ըստ կանխագոյն հաշուեհատութեան իմոյ պարտի լինել՝ ի բաց առեալ զամենայն արարեալ կարգադրութիւնս իմ մինչև ց70 հազար ռուբ. թղթադրամ կամ մինչև ց20.000 ռուբ. արծ. բաց ի նշանակեալ ի սմին դրամագլխոյ, և յետ ժամանակաց պարտին և կարեն միանալ ընդ սոյն դրամագլխոյ՝ տամ իրաւունս Պ. կտակակատարաց գործածել բաց յորբանոցէն իմմէ և առ այն առարկայս, զորս նոքա օգտակարագոյն համարեսցին յօժանդակութիւն կարօտելոց և ի խնամարկութիւն չքաւոր Հայոց, արժանի գտելոց ըստ աղքատ դրութեան, բարի վարուց և հանգամանաց ուշադրութեան բարեգործաց մարդկային ազգի։ Եստ այսորիկ ի վերայ ստացուածոց իմոց և դրամոց չնշանակել զորպիսի և իցէ խնամակալութիւն և զկտակակատարս չենթարկել հաշուեպահանջութեան։ Իսկ ի վերջ ամենայն ասացելոցս՝ ցանկամ եմ՝ զի որովհետև այս ամենայն դիտաւորութիւնք իմ պարտին գտանել ըղլրումն յետ քանի մի գուցէ և բազում ամաց, ուստի Պ. կտակակատարք ի դէպս մահուան միոյ ի նոցանէ՝ ընտրեսցեն ինքեանց զգործակիցս ի կատարումն կամաց իմոց յայսմ կտակի արձանագրելոց, և արարեալ այնու զկարգադրութիւն ի վերայ ամենայն կայից իմոց. այնու ամենայնիւ ես թողում անձին իրաւունս ցորչափ կեամ՝ զինչ ինչ յաւելուլ, փոփոխել, կամ բոլորովին զկտակս զայս ոչնչացուցանել. իսկ եթէ այս չլինիցի, յայնժամ սոյն այս կտակ՝ որ լրացաւ պէսպէս փոփոխութեամբք՝ պարտի ունել զկատարեալ զօրութիւն և զներգործութիւն ի փոփոխումն առաջնոյ կտակիս, պահպանելոյ ի Խորհրդարանի խնամակալաց, որ և յայսմ հետէ մնայ անվաւեր։

Զկտակս զայս ի մաքուր գաղափարեաց գրագիր Ա. կարգի Միխայլոյ Լարիոնով, որդի Անցիֆերովի. ի 14 Փետրուարի 1847 ամի։ Յիսկականին վաւերացուցեալ են թերթք։ Ընդ այս կտակ՝ որ կամօք իմովք գրեալ է՝ Պատուամեծար քաղաքացի և Ասպետ Եսայի Մովսիսեան Գասպարեանց ստորագրեաց։ Առ այն թէ՝ կտակս այս գրեալ է ըստ կամաց կտակակատար Պատուամեծար քաղաքացւոյ և ասպետի Եսայեայ Մովսիսեան Գասպարեանց, որ գտանի յառողջ միտս և ի թարմ յիշողութեան, թերթք ստորագրեալ և ի վերջոյ ստորագրեալ է ինքնին Պ. Գասպարեանն, վկայեմ և ստորագրեմ Աւագ քա-

Հանայ եկեղեցւոյն Հայոց և ասպետ Յովակիմ Մելիքեան։ Զնոյն վկայելով ստորագրեմ Տիտուլեարնիյ Սովէտնիկ Վասիլիյ Վարլամով Սեբեանիկով. զնոյն վկայեմ և ստորագրեմ Տիտուլեարնիյ Սովէտնիկ Մկրտիչ Յովսէփեան Էմին։ Զնոյն վկայեմ և ստորագրեմ Նատվորնիյ Սովէտնիկ և Ասպետ Նիկոլայ Ստեփանեան Թաղլուցքիյ։ Զստորագրութիւնս ձեռաց Պատուամեծար քաղաքացւոյ և Ասպետի Եսայեայ Մովսիսեան Գասպարեան հաստատեմ Քաղաքարաժնին թաղապետ Պորուչչիք Պրանտէ։

Ստոյգ է ընդ իսկականին
Գլխաւոր Անդամ խորհրդարանի, Անդամ վաճառականութեան
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՆԱՆՈՎ։
Քարտուղար Խորհրդարանի
Գաբր. Կիրիլով։

Տ-ղ-ն-ք էր Ի-ա-հ-կ-ոյ Մ-վ-ի-ս-ն-ոց Գ-ա-ս-պ-ր-ի-ա-ն-ոց, յ-ր-ի-ն-ա-լ է Մ-ի-ա-յ-ն Ա-ր-ե-գ-ի-ա-ղ-ա-ն Ս-ա-ղ-ա-ն-ի-ա-ն-ոց։

Ե՛րթ վաճառեա Փրկիչն ասաց,
Զինչ քո և տուր աղքատաց,
Նոցին փոխան զու ունիցիս
Անդ ի յերկինս անսպառ գանձ։
Թէ քաղցնում և տաս ինձ ուտել,
Կամ ծարաւիմ տաս ինձ ըմպել,
Յարքայութիւնն իմ քեզ պատրաստ,
Զեկայք օրհնեալքն ունիս լսել։
Անսուտ խոստմանցդ հաւատալով,
Հանգուցեալըս յուսով սիրով
Միշտ կերակրէ արբուցանէ
Զայրիս զորբս արդեամբք իւրով։
Ո՛չ լոկ զմարմին սա բուծանէ,
Այլ և զհոգիս լուսաւորէ,
Թէ գիտութիւնս թէ սուրբ վարս
Հազար մանկանց ուսուցանէ։
Տուն վասն իւր աստ ոչ շինեաց,
Այլ աղքատաց զայն պատրաստեաց.
Զնոյն Քրիստոս զօտարն յեղբարս
Յիւրաշէն տուն սա ժողովեաց։
Ի տան հօր Քո, Փրկիչ բարի,
Ուր օթեվանք բազումք կարի,
Հանգո՛ լուսով բզտրնտեսն
Գերդաստանիդ զսորայն հոգի։
Ամէն։

Надпись на надгробномъ памятникѣ Почетнаго Гражданина и Кавалера Исаія Моисѣевича Касперова.

Продай имѣнье—рекъ Спаситель,
И деньги въ руки нищихъ дай,
Ты стяжешь въ небесахъ обитель,
Въ награду ты получишь рай.

Я страненъ, алченъ былъ и боленъ,
Я былъ въ темницѣ средь оковъ,
Меня ты нужнымъ удоволилъ,
Устроилъ Мнѣ пріютъ и кровъ.

Приди ко мнѣ благословенный
Отцемъ и Мною человѣкъ,
Войди въ покой мой вожделенный,
И будь блаженъ со Мной во вѣкъ.

Христе! Твоимъ обѣтованьямъ
Усопшій мыслью, сердцемъ внялъ,
И трудовымъ своимъ стяжаньемъ
Сиротъ онъ и вдовицъ питалъ.

Себѣ онъ крова не устроилъ,
Желалъ Тебѣ подобенъ быть,
Но нищихъ братій успокоилъ,
И бѣдность далъ имъ позабыть.

Какъ много значитъ въ лѣта дѣтства
Познанье истины стяжать ?
Открылъ онъ дѣтямъ путь и средство
Умы, сердца образовать !

Христе въ обителяхъ Ты многихъ
Ему дай мѣсто и покой.
Отца, питателя убогихъ
Въ селеніяхъ Отца устрой.

Տ-ղ-ն-ք էր Գ-ի-ն-ի-ր-ա-լ Մ-ա-ք-ա-ր Պ-ղ-ա-ն Մ-վ-ի-ս-ն-ոց Մ-ե-լ-ի-ք-ե-ա-ն, յ-ր-ի-ն-ա-լ է Մ-ի-ա-յ-ն Ա-ր-ե-գ-ի-ա-ղ-ա-ն Ս-ա-ղ-ա-ն-ի-ա-ն-ոց։

Ը՛զհարկըն կայսեր հատոյց սա կայսեր
Որպէս բանն Աստուած ետ մեզ ի պատուէր,
Եղ զիւր կեանս հանդէպ հրոյ և սրոյ,
Տիրասէր զոլով հերոս անվեհեր։

Կեցցէ անձն իմ զի գքեզ օրհնեսցէ,
Աղօթէր առ Տէր ոմն մարգարէ.
Սա զոգջէր կայսեր գործովք իւր ասէր,
Մնացի՛ անձն իմ զի գահոյք քո կեցցէ,
Զինուոր դիւցազո՛ւն քաջիկ սա մարտեաւ,
Մինչև զաջ ձեռնըն թնդանօթ տարաւ,
Դեներալութեան պատուով, թոշակաւ,
Եւ ասպետութեամբք ձոխ պսակեցաւ.
Բայց և հոգևոր հարկ սա Աստուծոյ
Հատոյց հոգալով զաղքատաց հոգւոյ,
Թէ՛ իւր ազգակցաց և թէ օտարաց,
Պատրաստեաց սեղան տըրովք դրամոյ.
Ոչ միայն զիւր զգոյս արկ ի գանձանակ
Աստուծոյ, այլ և եղև օրինակ
Յօլով համազգեաց, որք բանիւ սորա
Զօնեցին նուէրս յաղքատաց ճարակ.
Խոստացար Փրկի՛չ մեզ բանիւ քոյին,
Թ՛ ողորմածք գտցեն անդ ողորմութիւն.
Աղքատասիրի տուր հոգւոյ սորին
Քո ողորմութեամբ զքոյդ Արքայութիւն.
Ամէն.

Надпись на надгробномъ памятникѣ Генералъ-Маіора и Кавалера Павла Моисѣевича Меликова.

Веленью Господа покорный,
Царю онъ долгъ свой заплатилъ
И жизнь Ему онъ посвятилъ.
Въ любви къ отчизнѣ непритворный
Онъ за отчизну шелъ на бой
Съ неустрашимою душой.
Молился Господу Пророкъ
Продолжить жизнь его земную
Чтобъ Господа хвалить онъ могъ,
А сей герой любовь святую.
Къ Царю и царству доказалъ
За благо, за спасенье трона,
За честь народа и закона
Онъ лучше умереть желалъ.

* * *

Въ войнѣ для Русскихъ незабвенной,
Воитель храбрый и герой
Остался съ лѣвою рукой.
Отъ службы, болью изможденный,
Съ наградою уволенъ былъ,
И знаки чести получилъ.

* * *

Царю слуга, отчизнѣ сынъ —
Онъ добрый Христіанинъ.
Исколь охотно шелъ на брань:
Съ такою же ревностію уань
Онъ Богу воздавать старался;
Любилъ алчущихъ питать;
Гайкановъ миловалъ, и тщался
Всѣмъ бѣднымъ слезы осушать.

* * *

Не только отъ щедротъ своихъ
Давалъ онъ бѣднымъ и безроднымъ
Онъ былъ примѣромъ для другихъ
И былъ примѣромъ не безплоднымъ:
Соотчичей исполнилъ жаръ
Священнаго соревнованья,
Они несли твои стажанья
Христовой меньшей братьи въ даръ.

* * *

Христе! Ты милость и пощаду
И въ небѣ вѣчную награду
Не ложнымъ словомъ обѣщалъ
Тому, кто бѣдныхъ призиралъ.
Его помилуй, пощади,
И въ царствіе Твое введи.

Сочинено Архіепископомъ Михаиломъ Салантьянъ, переведено съ Армянскаго на Русскій языкъ Протоіереемъ Іоакимомъ Меликовымъ.

ՍՈՒՐՀԱՆԴԱԿՔ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ·

Ի ԶՄԻՒՌՆԻԱ.

Հետևեալը ուրախութեամբ ընթերցանք Զմիւռնիոյ Արշալոյս օրաւէտ լրագրոյ մէջ։

Քաղաքիս Աղքատասիրաց ընկերութեան վիճակահանութիւնն Յուլիս 1ին օրինաւորապէս ի գործ դրուելով, զթիւ առաջին բաժնին՝ որ 10.000 ղուրուշ էր, շահեցաւ յարգոյ Նիկողոս աղա Օհանեան. որ նոյն գումարէն 2500 ղուրուշ միշեալ